

4895

284

G-78

Amph

1984

2010

2001

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՍՐՁԻՆ

157

ՇԼՈՒՄ ՊԱԽ ԱՆՈՒՆ ԱՆՀԱԻԱՏ

ԳԵՐՄԱՆԱՅԻՈՅՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیلہ
۲۷ ربیع الآخر ۳۰۱ و ۱۳ شباط ۹۹ نومرو ۱۰۱۷
مصارف آمریقان مسیوتر شرکتی طرفندن تسویه اولندرق

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1884

այ

284

ԵՄԵՐԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐՈՉԻՆ

ՇԼՈՒԾՊԱԽ ԱՆՈՒՆ ԱՆՀԱԻԱՏ

ԳԵՐՄԱՆԱՑԻՈՅՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیلہ
 ۲۷ ربیع الآخر ۳۰۱ و ۱۳ شباط ۹۹ نومرو ۱۰۱۷
 مصارفی آمریقان مسیوتر شرکتی طرفندن تسویہ اولندرق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1884

3664

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՐ ԿՐՆԵ

ՇԼՈՒՄՊԱԽ ԱՆՈՒՆ ԱՆՀԱԽԱՏ ԳԵՐՄԱՆԱՅԻՆ
Ի ՎԵՐԱՅ ԻՐ ԴԱՐՁԻՆ Ի ԲՐԻՍՏՈՆԵՆՈՒԹԻՒՆ



Պատանեկութեանս ժամանակ էի անասու
ուած և ամբարիշտ . ծնողքս միշտ կը հրա-
հանգէին զիս քրիստոնէական ճշմարտութիւն-
ներով, սակայն երբ յարբունս հասայ, վանե-
ցի սրտէս զԱստուած պաշտելու տենչը, և
նետուեցայ զուարճութեանց ովկիանոսը մեծ
հաճութեամբ : Եւ որովհետև սաակները զորս
կը վասնէի՝ իմս չէին այլ հօրս, և ընթացքս
հաճոյ չէր անոր, շուտով հասկցայ որ այլևս
հնար չէր ինձ մնալ ծնողացս քով, ուստի
միտքս դրի բաժնուիլ անոնցմէ՝ համարձակ
ապրելու համար ըստ հաճոյից : Այս նպատա-
կաւ մեկնեցայ և եկայ Սմերիկա 1859 ին, և
անմիջապէս գտայ հայրենակից եղբարցս մէջ
մարդիկ որ ընկերացան ինձ ամէն տեսակ հեշ-
տութեանց մէջ զորս կը սիրէի :

Այս կերպով յառաջ դացի օր քան զօր

6836-57

վատթարանալով, և վերջապէս եղայ արբեցող, նաև պատճառ եղայ ուրիշ երիտասարդ և չափահաս Գերմանացուց բռնել նոյն ընթացքը:

Այս ընկերներս անկրօն էին, և ես անոնցմէ սորվելով հետևեցայ անոնց գէշ ճամբաներուն:

Օր մը մին ի սոցանէ ըսաւ ինձ, «Շլումպախս, կը տեսնեմ որ սովոր ես երբեմն երբեմն ֆրիստոնէական կրօնքէն փաստ բերել: Բայց դիտես որ այդ կրօնքը սուտ և յիմարական առասպել է, և դուն սովոր ես անկէ փաստ բերել անտարակոյս սա պատճառաւ միայն որ ծնողքդ քրիստոնեայ էին:»

«Այո, տէր,» ըսի: «Որպէս զի կարենաս ազատամիտ մարդ ըլլալ,» ըսաւ նա, «քու գործըդ ըլլալու է քննել սրտիդ ամէն անկիւնը ուր մայրդ զետեղած է քրիստոնէական վարդապետութիւններ, և երբ դոնես անոնցմէ, իսկոյն խլես հանես զանոնք մի առ մի:» Ուստի սկսայ խլել հանել և ջնջել ինչ որ գտայ: Նախ խլեցի հանեցի սէրը զոր ունէի առ կին իմ և առ ընկերս, միով բանիւ արտաքսեցի սրտէս ամենայն ինչ՝ պահելով միայն անձնասիրութիւնս, և կը տածէի անյազ փափաք խաղալու, և խնդալու, և ասոնց համար

յօժար էի թողուլ ամենայն ինչ: Յարեցայ Եպիկուրեան կոչուած փիլիսոփայից վարդապետութեան, որոյ գլխաւոր նպատակն է հեշտութիւնը, և ուրիշ բանի միտ չէի դներ, լսել անգամ չէի ուզեր: Եղայ անկրօնից գրուիս, բայց և այնպէս տակաւին շատ հեռի էր ինէ ճշմարիտ երջանկութիւնը: 1868ին ամառուան մէջ ընկերական ուրախութեան երևելի հանդէս մը ունեցանք որ տևեց քանի մը օր, և այն աստիճան մեծ հաճութիւն և զուարճութիւն ունեցանք, որ յառաջ տարինք հանդէսը գիշեր ցերեկ: Խնճոյքին երրորդ գիշերը մեր դրօշակիրը, ճոն անուն, որ գեղեցկադէմ Գերմանացի երիտասարդ էր, թողուց տուն գնաց: Այս երիտասարդն ինձի հետ կը մրցէր ուտելու և խմելու մէջ: Սակայն ես, ինչպէս Գերմաներէն կ'ըսենք, «խմեցի զնա սեղանի տակ,» այսինքն, խմեցինք ի միասին մինչև որ նա ինկաւ սեղանին տակ անզգայ: Այս երիտասարդը երթալէն ետքը, ես ևս ուզեցի տուն երթալ և գացի: Երբ տուն հասայ, իսկոյն պառկեցայ, քանզի գլուխս կը ցաւէր:

Գեռ կէս գիշերը ժամ մը անցած էր, մեր դուռը զարնուեցաւ: Կինս ելաւ պատուհանը

բացաւ և հարցուց, «Ո՞վ է այն?» Մարդը վա-
րէն պատասխանեց, «Այրդ կանչէ, ճոնը մեռ-
նելու վրայ է»։ «Ոչ ամենեկին», պատասխա-
նեց կինս, «գուք ամուսնոյս գէշութեանը
պատճառ եղաք, այլևս բաւական է։ Ես չեմ
արթնցուններ զնա, դեռ հիմա եկաւ տուն,
թողէք որ քիչ մը քնանայ, կը խնդրեմ, գա-
ցէք»։ Մարդը նորէն թախանձանօք ըսաւ,
«Տիկին, կ'աղաչեմ, ըսէք անոր որ ճոն մահու
չափ հիւանդ է, անշուշտ դարու է»։ Կինս ըս-
տիպուեցաւ արթնցունել զիս։ Արթնցայ, ե-
լայ և հարցուցի, «Ի՞նչ կայ», և առի սա
պատասխանը, «Շուտ ըրէ, եկուր, ճոն ահա
կը մեռնի»։

Իսկոյն հագուեցայ և դացի։ Մական ճամ-
բան զգացումներս շատ գէշ եղան, և երբ
հասայ այն աղքատիկ տունը ուր երիտասար-
դը պառկած էր մերձ ի մահ, չգտայ հոն ա-
նոր ծերունի մօրմէն ուրիշ մարդ։ Մայրը
նստած էր իւր սիրելի միամօր որդւոյն քով,
և ակնարկեց ինձ տեսնել իւր որդւոյն վիճա-
կը։ Այն բարի ծերունի կնոջ դէմքը ցարդ-
աչացս առջևէն չերթար։ Կինն ըսաւ ինձ Գեր-
մաներէն, «Տէր, տես այս երիտասարդը, լա-
ղիտէ վիճակը, դու ես անոր պատճառ»։

Ես, որպէս թէ չհասկցայ խօսքը, դարձեալ
անոր հետ քաղցրութեամբ խօսեցայ, թէ և
չատ ցաւեցայ այն խօսքին համար։ Ցաւեցայ
մանաւանդ, երբ այն միջոցին յանկարծ դու-
ռը բացուեցաւ և օրիորդ մը ներս մտաւ։ Օ-
րիորդը խօսեալ էր երիտասարդին, որոյ հետ
պիտի ամուսնանար քիչ օր ետքը։ Զիարդ և
կցէ, ես մեղադրելու բան մը չէի գտներ յիս։
Երիտասարդը չափազանց խմեց այն խնճոյքին
մէջ, բայց այս յանցանքը իմ չէր, կրնար աւելի
քիչ խմել, ոչ ոք կը բռնադատէր զնա, իւր
կամօքը խմեց այնչափ, ուստի ինքն էր յան-
ցաւոր։ Բայց և այնպէս տեսարանը ցաւալի
էր, և չեմ համարձակիր նկարագրել զայն,
չեմ կարող բերան առնուլ։ Եթէ բերան առ-
նում զայն, սիրտս պիտի չդիմանայ, պիտի
խռովիմ և յարտասուս փղձկիմ։ Ողորմելի
մօր դէմքը, օրիորդին խռովեալ կերպարանքը
և ուրիշ պարագաներ, ինչպէս անոնց կսկի-
ծը, մահամերձ հիւանդին հառաչանքը, բոլոր
կենացս մէջ պիտի չերթան աչացս առջևէն,
պիտի չմոռնամ երբէք, և չեմ կրնար մոռ-
նալ։ Մաչափ միայն կ'ըսեմ թէ, երիտասարդ
մը որ տուած է սիրտը աշխարհային հեշտու-
թեան հոսանաց, և կ'ուզէ ապրել անհոգ, Աստ-

ուած չընէ որ պատահի այսպիսի ողորմ տեսա-
րանի ինչպէս պատահեցայ ես : Մակայն տպաւո-
րութիւնն այն ատեն մնայուն չեղաւ մտացս վրայ :

Հետեւեալ օրը թաղեցինք երիտասարդը ,
և , որչափ հնար էր , շքեղ և պատուաւոր յու-
ղարկաւորութիւն ըրինք . ծածկեցինք և մու-
ցուցինք անոր մահուան ամօթալի և տխուր
պարագաները : Գերեզմանատունը ես ճառ
մը խօսեցայ գովելով մեր վարդապետութիւն-
ներն իբրև անկրօն , կը կարծէի թէ քաջա-
բար և համարձակ խօսեցայ , քանզի ամէն
բարի զգացում նետած էի սրտէս :

1868ին Օգոստոս ամսուն մէջ երբ Ֆիլատէլ-
Ֆիսայէ Մաուչչընք քաղաքը կ'երթայի , շոգե-
կառքին մէջ պատահեցայ բարեկամներէս միոյն
որ հարցուց ինձ , «Ո՞ւր կ'երթաս » : «Մաուչ-
չընք կ'երթամ ,» ըսի «փոքր գործի մը համար
և պիտի դառնամ տուն » : Շաբաթ օր էր , և
կ'ուզէի այն գիշեր տունս գտնուիլ , ոչ այն
մտօք որ կիրակին պահեմ իբրև օր հանգըստ-
եան , քանզի անոր սուրբ օր ըլլալն անգամ
չէի խորհած , և զգուանք կու գար ինձ որ մար-
դիկ «սուրբ հանգիստ» կանուանէին զայն : Ես
կ'ուզէի և կը սիրէի կիրակին իբրև օր զբօսա-
նաց , խաղի և խրախութեան , բայց և այն-

պէս կ'ուզէի այն գիշեր տունս գտնուիլ :

«Բարի ,» ըսաւ բարեկամս , «եթէ բոլոր օրը
Մաուչչընք պիտի անցունես , ցերեկը մեզի ե-
կու , իմիասին ճաշենք » :

Ընդունեցայ հրաւէրը , և յառաջ տարինք
խօսակցութիւնը : Քիչ մը ետքը մարդը սա
հարցումն ըրաւ ինձ :

«Բարեկամ , կը սիրե՞ս զՅիսուս Քրիստոս
Տէրն մեր » :

«Սղինու զօրապետ ,» պատասխանեցի , «ես
կ'ատեմ զնա մանաւանդ քան սիրեմ , և կը
համարիմ թէ ով որ կը հաւատայ Անոր՝ յի-
մար է » :

«Ուրեմն ,» ըսաւ , «պարտիս զիս ևս յի-
մար համարել » :

«Բա՛րէ ,» գոչեցի , «մտքէս անգամ չէի ան-
ցուներ ձեզի համար այդպիսի նախատինք » :

«Ոչ՛ ,» ըսաւ նա , «ես չեմ ուզեր դուրս
հանուիլ իմ եղբարցս դասէն , եթէ կայ ա-
մօթ կամ նախատինք զոր մենք կրելու ենք ,
սիրով և կամաւ կը տանիմ : Ես Քրիստոսնայ
եմ » :

Այս խօսքին վրայ ես բոլորովին այլադու-
նեցայ և ըսի , «Ուրեմն ճաշի հրաւէրը յետս
պիտի կոչես , այնպէս չէ » :

“Ոչ, ոչ”, ըսաւ նա, “Քրիստոնեայք այսպիսի բան չեն ըներ: Միշտ իմ դուռս բաց է ձեր առջև:”

Ուստի գործս աւարտելէն ետքը դացի բարեկամիս որ տարաւ զիս իւր գրասենեակը: Այն ինչ քանի մը վարկեան հանդչած էի, տիկինը եկաւ և հրաւիրեց զմեզ սեղան, և յայնժամ զօրապետը ծանօթացուց զիս անոր: “Տիկին,” ըսաւ, “այս բարեկամս հարիւրապետ Փոն Շլումպախ գերմանացի երեւելի անհաւատն է:”

“Բարէ,” գոչեց տիկինը, “իրաւ դուք անհաւատ էք:”

“Տիկին, եթէ չէք սարսափիր, կ'ըսեմ, Այո՛ւ:”

“Ապա ուրախ եմ որ զձեզ տեսայ, ազնիւ Հարիւրապետ,” ըսաւ տիկինը:

Զարմանալի թուեցաւ ինձ որ տիկինն ըսաւ “Ուրախ եմ որ զձեզ տեսայ:”

Ճաշէն ետքը տիկինը հրաւիրեց զիս կենալ և սուրճ խմել, և ես հաճեցայ: Մինչդեռ ի միասին նստած կը խօսէինք, տիկինն ըսաւ ինձ, “Ես փիլիսոփայութենէ շատ քիչ կը հասկնամ, սակայն քրիստոնէութեան վարդապետութեանց և ազդեցութեանց բաւական

տեղեակ եմ, և արդ, եթէ կը հաճիս, նստէ քիչ մը խօսինք սա երկու բաներուն վրայ: Ինչ բարիք յառաջ եկած են ցարդ անկրօնից վարդապետութիւններէն, և ի՞նչ բարիք՝ քրիստոնէից վարդապետութիւններէն. և բաղդատենք անկրօնութեան և քրիստոնէութեան ազդեցութիւնները:

“Տիկին,” ըսի, “ձեր առաջարկութիւնը շատ հաճելի է, այնպէս ընենք:” Սակայն կ'ըսէի մաքէս, “Հիմա կը յաղթահարեմ դքեզ, կը ցուցնեմ քեզ յիմարութիւնդ:” Սկսանք խօսել, և տիկինը աշխարհիս մէջ գրեթէ ամէն չարութիւն և մեղք շարեց առջևս շուտով իբրև պտուղ անհաւատութեան: Զոր օրինակ, ես կը պնդէի թէ անհաւատութիւնը ծաղկելէն հետէ յաշխարհի, մարդիկ մտաւորապէս աւելի ազնուացան, նոյնպէս աւելի ազնուացան բարուց և գործոց մէջ, և ամենայն ինչ որ է բարի և օգտակար՝ կը գտնենք անհաւատութեան կողմը: Բայց նա մտադրութիւնս դարձուց անցելոյն վրայ, և յիշեցուց ինձ պատմութիւնները եւ ուրիշ բաներ զորս սորված էի դպրոցը, և տեսայ որ իրաւունք ունէր: Յուցուց թէ արդի քաղաքական և ընկերական յառաջադիմութիւնը

պարտական ենք քրիստոնէական կրօնից ծաւալման . ընկերական կենաց բարգաւաճման տարին անկէ կ'սկսի : Յուցուց նաև թէ բանտը, անառակներ պահելու և բռնի աշխատցնելու տուներ և այլ սոցին նման տեղեր անհաւատութեան պատճառաւ բաղմացան , «ապա թէ ոչ , ըսաւ , չէինք ունենար պէտք հաստատութեանց անառակներու համար , որբանոցներու անդամ չէինք ունենար պէտք , եթէ տղայք իրենց արբեցող ծնողներէն չթողուէին որբ , աղքատ և անպատասպար : Սակայն երբ անհաւատք սուին զիրենք արբեցութեան և ամէն տեսակ մոլութեանց , յայնժամ շատ աւելցաւ այդ պէտքը :” Ես չէի կրնար ժըխտել զայս , պարտէի խոստովանել թէ շիտակ էր : Սրգարև եթէ քննենք , պիտի դտնենք որ ճշմարիտ քրիստոնեայք հազիւ պէտք ունեցած են իրենց ընտանեաց համար այնպիսի հաստատութեանց : Մնհաւատութիւնը լեցուցած է բոլոր այդ թշուառութեան բնակարանները : Սակայն , որպէս զի չձանձրացունեմ ընթերցողը , համառօտիւ կ'ըսեմ թէ յաղթուեցայ , վիճարանութեան շերմագոյն ժամանակը հատաւ խօսքս և մնացի ասի ի բերան : Այս միջոցին տեսայ որ ժամանակը

շատ անցած , երեկոյ եղած էր , ուստի թէպէտ որոշած էի տուն երթալ , բայց տեսնելով որ վերջին շոգեկառքը մեկնած էր , ըստիպուեցայ մնալ մինչև երկուշաբթի , քանզի այն օրը շաբաթ էր :

Տիկինն իմանալով զայս՝ ըսաւ , «Հիմա որ չկրցար երթալ և մնացիր հոս , աղէկ է որ վաղիւ եկեղեցի երթաս :”

«Տիկին» , ըսի , «ես երբէք չեմ երթար եկեղեցի և չեմ ուզեր երթալ :”

«Բայց , ազնիւ հարիւրապետ , դուն քիչ մը յառաջ ըսիր , ‘Ես խօսքիս մէջ անկեղծ եմ’ , նաև ըսիր , ‘Երբ համոզուիմ թէ քրիստոնէական կրօնքը ճշմարիտ է , իսկոյն կը խոնարհիմ անոր առջև և կ'ընդունիմ :’ Յայտնի կ'երևի թէ ըստ բաւականին չհասկցար քրիստոնէութեան ազդեցութիւնը , և գիտես որ ես քարոզիչ կամ աստուածաբան չեմ . բայց եթէ երթաս վաղիւ եկեղեցի , հոն կը ըսես քարոզիչ մը , որ կը պարզէ և կը ցուցնէ քրիստոնէական ճշմարտութիւնները և անոնց ազդեցութիւնը , աղէկ կ'ըլլայ ուրեմն որ անգամ մը երթաս և ըսես , և ապա դատես և որոշես : Երկուշաբթի առաւօտ կրնաս ըսել ինձ ‘Այո’ կամ ‘Ոչ’ , ինչպէս որ պատշաճ կ'երևի քեզ :”

“Շատ ուղիղ կ'ըսես, արիւն,” ըսի, “աղէկ խորհուրդ մը կու տաս :” Հասկցայ որ քրիստոնէութեան վրայ շատ բան չէի գիտեր, վասն որոյ խոստացայ երթալ եկեղեցի : Այսպէս ըսելով անոր “Մնաք բարեալ,” գացի սենեակս որ պանդոկի մը մէջ էր, նստայ և սկսայ ուշի ուշով խորհել :

Առաջին խորհուրդը որ ծագեցաւ մտացս մէջ՝ սա էր . ինչ յիմարութիւն էր որ ըրի ես, թողի զիս այս կերպով թակարդ լինալ :

Յետոյ ունեցայ սա խորհուրդը . Հոս երկու հակառակ կարծիք կան, որոց մին ի հարկէ ճշմարիտ է . կամ տիկնոջ կարծիքը ճշմարիտ է և իմն սխալ, և կամ իմ կարծիքս է ճշմարիտ և տիկնոջը սխալ : Ուստի խնդիրը դարձուցի վեր ի վայր, ամէն կողմը զննեցի, և ո՛ր կողմ որ դարձուցի, միշտ գտայ որ կնոջը խօսքն ուղիղ էր, և իմն սխալ, ուստի ըսի մտքէս, Պարտիմ խոնարհել և դաւանել ճշմարտութիւնը, ապա թէ ոչ իրերն անաչառ քննող ողջամիտ մարդ չեմ ըլլար, կը կորսնցունեմ համբաւս, և կը համարուիմ իմաստակ որ չսիրեր ճշմարտութիւնը :

“Սակայն բարի”, ըսի դարձեալ մտքէս, “եւ երբէք զլուխ պիտի չխոնարհեցունեմ

քրիստոնէութեան առջև :” Այս միջոցին ինձ այնպէս թուեցաւ թէ ձայն մը ականջիս կ'ըսէր, “Սպաննէ գրեղ”, և ես յօժար գտնուելով անսալ այս խրատին, իսկոյն բացի պատուհանը որ զիս գետը նետեմ, իսկ անատեն կարծես թէ եկաւ ականջիս ուրիշ ձայն մը որ ցարդ չերթար ականջէս, “Ի՞նչ է այդ զոր կ'ընես : Ընդէ՞ր կու տաս կեանքդ :” — “Կեանքս ինչո՞ւ համար կու տամ, վասն զի չեմ ուզեր քրիստոնեայ ըլլալ, և կ'ընտրեմ մեռնել :” — “Մեռնել . ինչո՞ւ համար :” — “Քանզի կ'ուզեմ քրիստոնէութեան ճանկէն ազատիլ :” — “Ուրովհետեւ կը հաւատաս թէ քրիստոնէութիւնը ճշմարիտ է, կ'ուզես ազատիլ անկէ և դժոխք երթալ, այդպէս է :” Այս խորհուրդները բացին աչքս, և զգաստացայ : “Արդարև այդպէս է, այդպէս է”, գոչեցի : “Եթէ քրիստոնէութիւնը ճշմարիտ չէ”, խորհեցայ, “ի՞նչ հարկ կայ գետը նետել զիս . իսկ եթէ ճշմարիտ է, ես անձամբ նետած պիտի ըլլամ զիս դժոխք :”

Ուստի ետ կեցայ . բանաւոր կերպով խորհելը ետ կեցուց զիս այս չարիքէն : Բայց հիմա այնպիսի վախ մը եկաւ վրաս որ չեմ կրնար նկարագրել, միայն սա չափ կ'ըսեմ

թէ, ժամերով սենեկիս մէջ վեր վար պարտեցայ : Եթէ ուզեմ թշնամոյս վրայ անէծք կարգալ, և ուզեմ գտնել մեծագոյն անէծք, պիտի ըսեմ, թող այնպիսի գիշեր մը անցունէ որպիսի անցուցի ես, և կամ, Վրան գան այն ժամերը որ դիս տազնապեցուցին : Սարսափելի բան, սարսափելի բան : Այսպէս գրեթէ առաւօտը մտեցաւ, և մինչև այն ժամանակ չկրցայ բան մը որոշել, միայն ճանչցայ որ եկեղեցի երթալ պարտ էր ինձ, և կ'ուզէի այս պարտականութենէն ազատիլ : Բայց դարձեալ եկաւ ներսէս ձայն մը որ կ'ըսէր, «ի՛նչ յիմար մարդ ես դուն . եթէ կ'ուզես ազատիլ այն պարտականութենէն, մի միայն գործդ է արբենալ, և ամէն բան կը վերջանայ . յայնժամ բնականապէս կ'արգելու իս եկեղեցի երթալ . մի կենար, արբենալ նայէ :» «Այդ իրաւացի է», ըսի մտքէս, գացի անկողին և իսկոյն քնացայ : Երբ առաւօտուն ելայ, առաջին գործս ըրի արբենալ, և առանց նախաճաշ ընելու ճամբայ ելայ : Գեռ շատ կանուխ էր երբ ճամբայ ելայ, և եկայ բարեկամ խանութպանի մը որ գարեջուր կը ծախէր, և որոյ քով անցուցած էի նախընթաց օրը, «լեցու, տեսնեմ», ը-

սի, «խմենք ի միասին :»

«Գեռ շատ կանուխ է», ըսաւ խանութպանը : «Գիտես որ», ըսի «ուչ կանուխ, միշտ խըմելու ժամանակ է :» Եւ այսպէս անձամբ լեցուցի գաւաթը, և առաջարկեցի որ գաւաթ մը ևս ինք խմէր, և նա ընդունեցաւ առաջարկութիւնս : Մինչ կը վերցունէի գաւաթս որ դիտեմ գարեջուրին երեւոյթը, ինչպէս միշտ սովոր ենք ընել Գերմանացիքս, այնպիսի սոսկալի գարշահոտութիւն մը եկաւ ունդացս, որ չկրցայ խմել գարեջուրը, վար գրի գաւաթը և այլ ևս չառի : Չէի ուզեր մարդուն ըսել, «Բարեկամ, գէշ է գարեջուրդ :» Այդ չէի կրնար ընել, քանզի երեւոյթն աղէկ էր, սակայն զգացի թէ գէշութիւն մը կար : Ուզեցի արբենալ, և արբենալու համար խմելու էի, բայց չկրցայ խմել : Երբ գաւաթը վար գրի, մարդը ըսաւ, «ի՛նչու չես խմեր :» Ըսի, «Գէշութիւն մը կը զգամ, ներեցէք ինձ :» Տուի գարեջուրին ստակը և դուրս ելայ, և բաւական ճամբայ երթալով, կը խորհէի թէ ինչ կերպով կրնամ արբենալ : Այս միջոցին եկեղեցւոյ զանգակները զարնուեցան, և միտքս եկաւ խոստումս, ուստի գացի դէպ ի զանգակին ձայնը, և հարցուցի եկեղեցին որուն

վրայ խօսած էր ինձ տիկինը : Գտայ և դացի ներս : Երբ դուռնէն մտայ , տիկինը ոտք ելաւ և հրաւիրեց զիս իւր նստարանը : Նստայ հոն և լսեցի . քարոզը : Մակայն բնաւ ազդեցութիւն չբրաւ իմ վրաս , և խորհեցայ թէ , եթէ այս է քրիստոնէութիւնը կամ քրիստոնէական փիլիսոփայութիւնը կրնամ օրերով լսել առանց ազդուելու և ծաղրեցի սըրտիս մէջ , և ըսի մտքէս . « Տիկին , հիմա եթէ ուրիշ խօսակցութիւն մը բացուի մեր մէջ , կրնամ քիչ մը աւելի դէմ դնել քեզ : » Համարձակութիւն եկաւ վրաս այսպէս խորհելու և այսպէս խօսելու :

Երբ եկեղեցիէն դուրս ելանք , առաջին առթիւ տիկինը ըսաւ ինձ , « Բարեկամ , այս օր ուրիշ դործ չունիս ընելու , կ'ուզե՞ս դալ և և մեր կիրակնօրեայ դպրոցը տեսնել : »

« Շատ բարի » , ըսի , « տեսած չեմ կիրակնօրեայ դպրոց և կը փափաքիմ տեսնել : »

Մ. յնչափ հաստատուած էի համոզմանս մէջ որ , կը խորհէի թէ որչափ աւելի տեսնեմ և լսեմ քրիստոնէութիւնը , այնքան աւելի պիտի հաստատուիմ անհաւատութեանս մէջ , ուստի « հարցուցի , « Ե՞րբ է դպրոցին ժամանակը » . « Այն օրէն ժամ ու կէս ետքը » , պատասխանեց :

Այսպէս ելայ ժամանակին դացի տեսնել կիրակնօրեայ դպրոց ըսուածը , և երբ եկեղեցւոյն դուռը մտեցայ , ականջս հասան տղոց երգերու քաղցր ձայներ : Դուռը բացի , մտայ ներս , և իսկոյն տեսայ մանր տղայոց բազմութիւն մը : Կենացս մէջ տեսած չէի այսպիսի տեսարան , շատ զարմացայ տեսնելով այնքան փոքր աղջկուհիք և փոքր տղայք որ ի մի վայր հաւաքեալ խնամով կը հըրահանդուին ի հոգևորս և ի բարոյականս , մինչդեռ աղէկ գիտեմ թէ անոնք որ քրիստոնէայ չեն և կ'արհամարհեն զայն , երբէք չեն երազէր այսպիսի փոքր տղայոց հոգ տանել , անոնց մտքէն անգամ չանցնիր ուսուցանել և կըթել զանոնք : Մինչ տղայք այնպէս քաղցրութեամբ կ'երգէին , այն ազնիւ և բարի տիկինը անոնց առջև կեցած էր , և երբ աւարտեցին երգը , նշան տուաւ անոնց նստել և անմիջապէս եկաւ քովս : « Բարեկամ , » ըսաւ , « հրամմէ նստէ . ուրախ եմ որ հոս կըտեսնեմ զձեզ : » Եւ դարձաւ տղայոց , « Տղայք » , ըսաւ , « ահա ասիկ իմ ամուսնոյս մէկ սիրելի բարեկամը , որ կը բաղձայ լսել ձեր երգերը : »

Տղայք իսկոյն ուրիշ երգ մը երգեցին և յետոյ միւս ևս , և դարձեալ ուրիշ մը :

կ'զգայի որ սրտիս վրայ ազդեցութիւն մը կար, բայց բաւական արթուն էի տեղի չտալ : “Հող չէ,” կ'ըսէի մտքէս, “յաղթելու համար զիս, աւելի զօրաւոր հարուածներ պէտք են :”

“Սրբ, բարեկամ,” ըսաւ տիկինը, “ահաւաւսիկ Աստուածաշունչ մը :” “Տուր ինձ ըսի :” Այրած էի Աստուածաշունչը զոր ունէի տուներս, բայց և այնպէս առնելէն ինծի փնտս չկար խորհեցայ : Անատեն տիկինը դարձաւ տղայոց և ըսաւ . “Տղայք, հիմա ՉՅրդ Սաղմոսը պիտի երգենք, ‘Տէրը իմ հովիւս է’ . դիտէ՞ք զայն :” “Այո, տիկին,” պատասխանեցին ամենքն ի մի բերան քաջութեամբ : Ըսի մտքէս, “ի՛նչ հաճելի է տեսնել զտղայս քաջ և համարձակ :” Տղայք սկսան : Տիկինը բան մը չըսաւ, բայց նորք սկսան ինքնին և յառաջ գացին, տիկինը միայն ձեռքը վեր վար, աջ և ահեակ կը շարժէր, որպէս զի տղայք միաբան երգէին : Սաղմոսին իւրաքանչիւր բառը զոր այնպէս միաձայն կ'երգէին, կ'այրէր կը տոչորէր սիրտըս . դիտէի որ զգացած չէի երբէք այն մխիթարութիւնը որ կ'երևար սաղմոսին մէջ :

Տեսնել այնպիսի փոքրիկ տղայք որ կ'երգէին այնպէս համարձակ և զուարթ՝ շարժեց զիս : Յետոյ տիկինը առաջարկեց ուրիշ երգ

մը զոր երբ սկսան երգել, ես յարտասուս փզճկեցայ : Տեսնելու էլք տղայոց հիացումը թէ ինչպէս իրենց գլուխը վեր առած ինծի կը նայէին հասկնալու համար թէ ինչու կուլայի : Իսկ ես շատ ամչցայ և ջանացի բռնել զիս, բայց չկրցայ, մի միայն բանը զոր կըրնայի ընել՝ էր ելնել երթալ :

Երբ դէպ ի դուռը գացի, տիկինը ելաւ ետեւէս եկաւ, և ձեռքը ուսիս վրայ դնելով, ըսաւ . “Բարեկամ, դուն խոստացար այցելութիւն ընել այսօր ամուսնոյս կիրակնօրեայ դպրոցին :”

“Լաւ,” ըսի, “ո՞չ ապաքէն եկայ, այս չէ՞ կիրակնօրեայ դպրոցը :”

“Ոչ,” պատասխանեց, “ուրիշ սենեակ է կիրակնօրեայ դպրոցը : Գնա եկեղեցւոյն միւս կողմը, և առաջին դուռնէն մտիւր, այն է կիրակնօրեայ դպրոցը, հոն կը գտնես ամուսններս :” Ուստի սկսայ սրբել աշուրներս, և ջանացի հանել սրտէս այն յիմարական զգացումը, և երթալով եկեղեցւոյն միւս կողմը, հոն մտայ սենեակ մը, ուր տեսայ մեծ բազմութիւն ունկնդրաց, արք և կանայք երկտասարդք և օրիորդք, և զարմանք երկտասարդք և օրիորդք, և զարմանք պատեց զիս որ այնչափ մեծ բազմութիւն ձերոց և

երիտասարդաց օրուան այն ժամուն եկած էին կիրակնօրեայ դպրոցը, և տիկնոջ ամուսինը որ զօրապետ էր՝ ելած էր բեմը, և տեսնելով զիս կոչեց իրեն քով, և ես դացի բեմը։ «Նայէ՛ անդամ մը և տես», ըսաւ, «այս է մեր կիրակնօրեայ դպրոցը։» Բայց ես դրոց պահարանին դարձայ և անոր կը նայէի, որպէս զի մարդիկ երեսս չտեսնէին։ Շփոթութիւնս փարատելու համար՝ խորհեցայ ժողվել ինքզինքս, այսպէս սիրտս հանդարտեցաւ. և նա հնչեցունելով զանգակը ըսաւ ժողովրդեան, «Հիմա գիրքերը մէկդի դրէք», և քանի մը տուն երգ երգեւէն ետքը, «Այս բարեկամս», ըսաւ, «Շլումպախ հարիւրապետը, որ անհաւատ է, և կըսէ թէ՛ Աստուած չկայ, պիտի խօսի ձեզ և պիտի հաստատէ թէ Աստուած չկայ։» Այս ծանր և ահարկու թուեցաւ ինձ։ Արդարեւ շատ անգամ պանծալով ըսած էի, թէ կրնամ քրիստոնէից առջև կենալ և ըսել անոնց թէ Աստուած չկայ, և համոզել զանոնք թէ իրենց քարոզիչները ծածկած են անոնց աչուրները որ չտեսնեն բաները, և թէ կրնամ բաւական դիւրաւ հասկցունել անոնց թէ հաւատալն ի ֆրիստոս օրիստս սոսկ երեւակայական յոյս է։ Սակայն հիմա որ հրաւիրուեցայ ընել զայս,

սոսկում եկաւ վրաս։ «Ի՞նչ եղար», ըսի մտքէս, «զգաստացիր, քաջ եղիր, թերեւ խօսիս բան մը, և նպատակդ կատարուի։» Յետոյ նստաւ և երգ մը առաջարկելով դպրոցը սկսաւ։ Եւ երբ ժողովուրդն սկսաւ երգել, ես սկսայ լալ։ Դժուարութիւնն այս էր որ չկրցայ բռնել զիս։ Երգերը սրտիս խորը կը թափանցէին, և խորհեցայ թէ միտքս ուղղութեամբ յայտնել լաւագոյն էր, ուստի ոտք ելլելով ըսի, «Արդարեւ ես չէի հաւատար թէ Աստուած կայ, սակայն երէկուրնէ հետէ համոզուեցայ թէ քննած չէի այս խնդիրը ճշմարտութեամբ և անկեղծութեամբ, վասն որոյ որոշեցի խնդրել անոնցմէ որ, եթէ կը հաւատան թէ Աստուած կայ և եթէ քան զիս աղէկ գիտեն թէ ֆրիստոս Տէր և Փրկիչ է մեղաւորաց, աղօթեն ինձի համար, ինչպէս կ'ընեն ուրիշներուն համար, բայց ես ինքս դեռ կարող չեմ հաւատալ։» Զայս ըսելով նստայ։

Զօրապետ բարեկամս վերջացուց կիրակնօրեայ դասը աղօթիւք և երգօք, և յայնժամ թեւս մտաւ և ի միասին ելանք դուրս. բայց չթողուց զիս երթալ պանդոկս, այլ ճաշի տարաւ զիս իւր տունը։ Ճաշի ժամանակ խօսք չեղաւ կրօնքի վրայ։ Ասոր վրայ ուրախացայ.

քանզի միտքս դեռ պատրաստ չէր շատ բան խօսելու, երբ սեղանէն ելանք, զօրպետը բարեկամի մը հետ դուրս ելաւ, և տիկինը հրաւիրեց զիս վերի յարկը, քանզի ամառ էր և օդը շատ տաք, վասն որոյ զով տեղ մը տարաւ զիս, և երբ նստանք, «Աղէկ միտքս եկաւ, բարեկամ», ըսաւ, «միտք ունիմ դալ տարի ամուսնոյս հետ Գերմանիա երթալ, և եթէ կը հաճիս քիչ մը տեղեկութիւն տալ ինձ ձեր երկրին վրայ, շատ ուրախ և շնորհակալ կ'ըլլամ»:

Այսպէս նստանք, և սկսայ խօսել և պատմել Գերմանիոյ, իմ սիրելի հայրենեացս վրայ ուստի եկած էի: Նաև մանր նկարագրեցի անոր ընտանեացս և մանկութեանս վերաբերեալ շատ բաներ: Խօսքը տեւեց բաւական ժամանակ, և տիկինը ուշադրութեամբ մտիկ ըրաւ, ապա յանկարծ կտրեց խօսքս.

«Բարեկամ», ըսաւ, «բան մը հարցունեմ քեզ, բայց մի դժուարիր, նաև մայրդ անհաւատ էր»: Այս հարցումը խռովեց զիս: Առաջ ըսած էի թէ ամէն բան սրտէս հանած էի, բայց մօրս յիշատակը չէի կրցած հանել սրտէս, նոյն իսկ անոր գերեզման երթալէն ետքը, բայց հիմա տեսայ որ անհաւատու-

թեամբս մեծ նախատինք կը բերէի մօրս վրայ գերեզմանին մէջ: «Ոչ, տիկին», պատասխանեցի, «ճշմարիտ խօսելով մայրս քրիստոնեայ մեռաւ. և ինձ համար պատուիրած էր հօրս իբրև վերջին կտակ, 'ըսէ Ֆրէտին որ երբէք չմոռնայ և չթողու զՔրիստոս':» Հոս մօրս սիրոյն և բարութեան յիշատակը զիս տապալեց, և սկսայ լալ, չեմ գիտեր որչափ ժամանակ տեւեց, բայց մթնցած էր երբ աչքս բացի:

«Բարեկամ», ըսաւ տիկինը, «կ'ուզե՞ս ինձի հետ եկեղեցի երթալ այս երեկոյ: Ոչ որ ունիմ հետս ընկեր, դուն կուզա՞ս»:

«Այո», ըսի, և դացի, և եկանք Մաուչչընքի արեւելեան կողմը մատուռ մը, ուր երիտասարդ պաշտօնեայ մը բեմ ելած կը քարոզէր Յիսուսի Աւետարանը: Իւրաքանչիւր բառ զոր կ'արտաբերէր՝ կը տոչորէր զիս, և բոլորովին համոզուեցայ անոր խօսքին ճշմարտութեանը. մի միայն անձկութիւնը որ զիս կը տագնապէր՝ սա էր, կը բաղձայի գիտնալ թէ ինչպէս կրնայի ստանալ Փրկիչը զոր կը քարոզէր պաշտօնեան: Երբ ըսաւ, «Ո՛վ որ կը բաղձայ ունենալ զՅիսուս իրեն Փրկիչ, պարտ է ընդունել անոր Աւետարանն ամենայն պարզ-

մտութեամբ, որոշելով հպատակել իւր կամքն Աստուծոյ կամացը, և խնդրելով Աստուծմէ մաքրել զնա Յիսուսի արեամբ,՝ անձկութիւնս մեղմացաւ, և ընդունեցայ այս խրատը խոնարհութեամբ: Իսկոյն գլուխս ծռելով խնդրեցի Աստուծմէ օգնել ինձ՝ ողորմելի մեղաւորիս, և Տէրը նոյն հետայն ընդունեց զիս, և այն ժամէն հետէ պահեց զիս, առաջնորդեց ինձ, բնակեցաւ յիս, և ցարդ կը բնակի, և ըրած է զիս երջանիկ կենացս բոլոր օրերը: Կրնամ 'ի փորձոյ ըսել թէ Տէրը միշտ բարիք ըրաւ ինձ կենացս բոլոր վայրկեաններուն մէջ, թէ ուրախութեան և թէ տրտմութեան օրեր, յորմէ հետէ հաւատացի ի նա և ընդունեցի զնա, և կը հաւատամ թէ ով որ կը ճանչնայ զՏէր Յիսուս, և կը դառնայ առ Աստուած և կը պաշտէ զնա հաւատով, կ'ունենայ խաղաղութիւն և խնդութիւն:

Դարձիս այս պարզ և անզարդ նկարագրութիւնն կընեմ, և կը յուսամ թէ ամէն ըսող պիտի վստահի անկեղծութեանս և հաւատայ ինձ: Յայսմ չունիմ ուրիշ շահ, բայց միայն պատուել Տէրս, որոյ սիրոյն և ողորմութեանը կ'ընծայեմ ամէն փառք: Ինքն է աղբիւր և պատճառ փրկութեանս, և ըղձիւք

կը խնդրեմ որ օրհնէ Աստուած զձեզ ամենեւին, և տայ ձեզ դառին արեամբ փրկեալ հոգւոյ ուրախութիւնը:

(Շլումպախ տուաւ անձամբ այս տեղեկութիւնը իւր դարձին վրայ Մր. Մուտիի մեծամեծ ժողովներէն միոյն մէջ՝ Ամերիկայի Սէնդ Լուիս քաղաքը:

Այս պատմութենէն կը տեսնուի թէ Շլումպախի մտաց վրայ խորին տպաւորութիւն ըրաւ և վերջապէս անոր դարձին պատճառեղաւ սա համոզումը, թէ իւր անհաւատ կամ անաստուած դրութիւնը չէր տար անոր տըրտմութեան մէջ այն մխիթարութիւնը, և ոչ իւր չար կիրքերը սանձելու այն ոյժը, զորս կու տայ Քրիստոնէական կրօնքը:

Շլումպախ մօտերս դարձաւ Գերմանիա իր հայրենիքը, և մեծ յաջողութեամբ կը քարոզէ հիմա հոն Աւետարանը զոր երբեմն կը ջանար կործանել:)

Հիմա եկէք վիճաբանինք, կ'ըսէ Տէրը. թէ որ ձեր մեղքերը կրկնակի կարմրի պէս են՝ ձիւնի պէս պիտի ճերմըկնան, և թէ որ որդան կարմիրի նման են՝ ասրի պէս ճերմակ պիտի ըլլան:

Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ :

Յովհ. Գ. 16:

Սակայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայանեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ :

Հռովմ. Ե. 8, 9:

Ստով դիտցանք Քրիստոսի սէրը, որ անիկա իր կեանքը մեզի համար դրաւ :

Ա. Յովհ. Գ. 16:

ԿԱՐՈՂ ԵՍ ՓԲԿՈՒԵԼՈՒ

Վասն զի Աստուած իր Որդին չզրկեց աշխարհ որ աշխարհ դատէ, հապա որ աշխարհս անով փրկուի : Յովհ. Գ. 17:

Աս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու : Ա. Տիմ. Ա. 15:

Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ. ինչու որ անկէ ի դատ ուրիշ անուն մը չկայ երկնից

տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործք. Գ. 12:

Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն և քու տունդ : Գործք. Ժ. 2. 31:

Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնք մեզ ամէն մեզքէ կը սրբէ : Ա. Յովհ. Ա. 7 :

ՀԱՒԱՏԱ ԵՒ ԱՊՐԷ

Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի : Յովհ. Գ. 36:

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր որ զիս զրկեց՝ յաւիտենական կեանք ունի : Յովհ. Ե. 24:

Եւ ինտոր որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, անանկ ալ պէտք է որ Որդին մարդոց բարձրանայ, որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ : Յովհ. Գ. 14, 15:

Եւ ան ամէն բաներէն՝ որ Մովսէսին օրէնքովը չկրցար արդարանալ, ասով՝ ամէն ով որ հաւատայ կ'արդարանայ : Գործք. Ժ. Գ. 39:

La. 4.

4


10

Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

SECTION OF THE

Main body of faint, illegible text on the left page, continuing from the top section.

Large area of faint, illegible text on the right page, appearing as bleed-through from the reverse side.



ՅԱՆԿ ԳՐՈՅ ԵՒ ՏԵՏՐԱԿԱՅ

ՈՐ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԱՄԵՐԻԳԱՆ ԽԱՆԻ

ԳՐԱՏՈՒՆԸ



	ԵՐԷ
Փարոսի մը պատմութիւնը	36
Ճէսիգայի առաջին աղօթքը	36
Երկու որբոց պատմութիւնը	24
Երկու գառնուկներուն պատմութիւնը	24
Թէ ինչ յարարերութիւն կայ Տէրունական ընթերեաց եւ եկեղեցւոյ բարւոք վիճա- կին մէջտեղ	46
Իւր խօսքին հաւատարիմ մարդ	44
Մահը զիմաւորել յուսով կամ երկիր զիւ	10
Մօր մը խօսքերը	8
Գրովտիոս եւ անոր խոստովանութիւնը մահուան ժամանակ	8
Օրհնեալ մատենանը	7
Առաջադրութիւնք քրիստոնեայ անն	7
Մօր մը զիտաւորութիւնը եւ որոշումը որդւոց կրթութեան համար	7


4815

2013

« Ազգային գրադարան



NL0031884



4659